ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1. Առկա իրավիճակն ու կարգավորման անհրաժեշտությունը

Պայմանավորված նոր Covid-19 վարակի աննախադեպ տարածմամբ և հետագա տարածման կանխման հրամայականով և հանրապետությունում մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ռեժիմով՝ սոցիալական շփումները նվազեցնելու նպատակով բազմաթիվ հաստատություններ անցել են աշխատանքի հեռահար ռեժիմի, իսկ զանգվածային միջոցառումների անցկացման համար սահմանվել են մի շարք սահմանափակումներ:

Սակայն սոցիալական շփումների առավել արդյունավետ նվազեցմանը երբեմն խոչընդոտում են որոշակի օրենսդրական կարգավորումներ, որոնք սահմանում են այս կամ այն իրավիճակի համար այնպիսի պարտադիր պահանջներ, որոնք համաչափ չեն հետապնդվող նպատակներին, և որոնց կատարումն այլևս անհրաժեշտ չէ այդ նպատակներին հասնելու համար:

Այդպիսի կարգավորումներից են բաժնետերերի ընդհանուր ժողովի հրավիրման և անցկացման կարգի վերաբերյալ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթները: Այսպես, նշված օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում ընկերությունները պարտավոր են գումարել տարեկան ընդհանուր ժողով: Միևնույն ժամանակ, տարեկան ժողովում, ինչպես նաև այն արտահերթ ժողովում, որում հաստատվում են տարեկան հաշվետվություններ, հաշվապահական հաշվեկշիռներ, շահույթների և վնասների հաշիվներ, շահույթների և վնասների բաշխում, տարեկան շահութաբաժինների չափ, արգելվում է հեռակա քվեարկությունը:

Ավելին, Օրենքով նախատեսված՝ ժողովի մասին ծանուցման ձևերը սահմանափակվում են բացառությամբ թղթային փաստաթղթեր հանձնելով՝ պատվիրված նամակով կամ առձեռն:

Կարծում ենք՝ նշված կարգավորումները հնացած են և չեն համապատասխանում ներկա իրականությանը ինչպես տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրոնային կապի միջոցների զարգացվածության ներկայիս մակարդակի, այնպես էլ Covid-19-ը հաղթահարելու համատեքստում: Այս առումով հարկ ենք համարում նաև շեշտել, որ ի

տարբերություն քննարկվող օրենքի՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքները որևէ կերպ չեն սահմանափակում համապատասխանաբար ընդհանուր ժողովները և հոգաբարձուների խորհրդի նիստերը հեռակա քվեարկությամբ անցկացնելու հնարավորությունը:[1]

2. Առաջարկվող կարգավորումների բնույթը

Լրացումների և փոփոխությունների նախագծով փորձ է արվում հաղթահարելու վերոնշյալ ռիսկերը, մասնավորապես՝

1) առաջարկում է հեռակա քվեարկության հնարավորությունը տարածել բաժնետերերի բոլոր ժողովների վրա: Ավելին, ներդրվում է նաև «իրական ժամանակում առցանց քվեարկության» կոնցեպտը, ինչն ավելի ճկուն է դարձնում ստեղծված իրավիճակում ժողովների հրավիրումը,

2) ներդրվում է «էլեկտրոնային քվեաթերթիկ» հասկացությունը, ինչը հնարավորություն կընձեռի առանց թղթային փաստաթղթերի օգտագործման կազմակերպելու հեռակա քվեարկություն (առցանց քվեարկություն),

3) ընձեռվում է ժողովի անցկացման մասին էլեկտրոնային կապի միջոցներով ծանուցելու հնարավորություն,

4) քանի որ Օրենքը ժողովի կազմակերպման պարտականությունը դնում է խորհրդի վրա, սույն նախագծի խնդիրների առավել արդյունավետ լուծման համար նախատեսվում է նաև խորհրդի նիստերում ընձեռել հեռակա քվեարկության հնարավորություն:

3. Ակնկալվող արդյունքները

Նախագծի ընդունումը հնարավորության կտա հավասարակշռել հանրային առողջության բնագավառի մարտահրավերներին դիմակայելու և կորպորատիվ կառավարման սկզբունքներին ու պարտադիր պահանջներին ենթարկվելու հրամայականները:

---

[1] Covid-19-ի հաղթահարման հրամայականի համատեքստում անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նշված օրենքներով չկան ընդհանուր ժողովի և հոգաբարձուների խորհրդի անցկացման այնպիսի խիստ ժամկետներ, ինչպիսիք նախատեսում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը: Սա նշանակում է, որ վարակի տարածվածության ներկայիս մտահոգիչ պայմաններում բազմաթիվ բաժնետիրական ընկերություններ ստիպված են լինելու կանգնել երկընտրանքի առաջ՝ կամ չհրավիրել ֆիզիկական տարեկան ժողով՝ դրանով խախտելով օրենքի պահանջները, կամ հրավիրել այն՝ վտանգի տակ դնելով հանրային առողջությունը: